ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԹՈԽԱԹՅԱՆ ԿԱՐԵՆ ՍԵԴՐԱԿԻ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Է.00.05** «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2020**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդում:

**Գիտական ղեկավար** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Դանիելյան Էդուարդ Լիպարիտի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ** պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
**Քոսյան Արամ Վաղարշակի**

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
**Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի**

**Առաջատար կազմակերպություն** **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. դեկտեմբերի 22-ին, ժամը $14^{00}$, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմություն 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մուրադյան Հ. Ղ.**

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** ժայռապատկերը պատմամշակութային արժեք է, ինագույն շրջանի իրականության էական կողմերն արտացոլող պատկերային սկզբնաղբյուր: Այն նախնյաց մտածողության ու գործունեության դրսևորում է, վաղնջական մշակույթի կրող, դրա մի տեսակը, փուլն ու ձևը: Պատկերագրի այս նախաձևը՝ որպես հաղորդակցության միջոց, ապահովել է սերունդների կապը, կենսափորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը:

Ժայռապատկերումն իր ժամանակի աշխարհընկալումային, ծիսապաշտամունքային և ուսուցողական ոլորտների անբաժան մասն էր ու տեսակը: Այսօր այն ունի գիտաճանաչողական նշանակություն, որպես Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VII-I հազ. պատմամշակութային իրականության բացահայտման միջոց և հավաստի աղբյուր: Այս առումով է ժայռապատկերների ուսումնասիրությունը եղել և մնում արդիական:

Հայաստանի ժայռապատկերների տիպաբանությանը և պատմամշակութային առանձնահատկություններին նվիրված սույն աշխատանքում ծավալուն անդրադարձ է արվում ժայռարվեստի և առնչակից ոլորտների հուշարձանների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությանը, դրանց բնութագրմանն ու դասակարգմանը՝ ըստ տեղադրության, ժամանակաշրջանի, տեսակների, բովանդակության ու գործառույթի:

Հատուկ քննության են առնվում աստղագիտական պատկերացումներ արտացոլող ժայռանկարները, գտածոները, կոթողները և կառուցվածքները՝ տիեզերաբանական մտքի առարկայական դրսևորում լինելու և կիրառական նշանակության առումով: Այս կարգի նյութերը համադրված են դիցամտածողության ու պաշտամունքի, կերպարվեստի, գրականության, բառամթերքի և հայ մատենագրության մեջ առկա հիշատակումների հետ:

Հետազոտությամբ ստացված գիտելիքը կիրառվել է պատմամշակութաբանական մի շարք խնդիրների՝ ճշգրիտ թվագրման, ժայռապատկերաբանության, օրացույցի և հնադարյան արվեստի ակունքների պարզաբանման համար: Ժայռանկարների ստեղծումը զուգահեռվում է հայոց պատմության և լեզվի վաղնջական ժամանակներին: Լույս սփռելով պատմական զարգացումների ընթացքին, դրանք ըմբռնելի են դարձնում մտածողության և մշակույթի ծագումնաբանական առանձնահատկությունները, վկայելով տեղաձին մշակույթի ժառանգականությունը և իր բնօրրանում հայ էթնոսի հարակայությունը:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսությունը վերաբերում է Հայաստանի ժայռապատկերներում և մշակույթի հարակից ոլորտներում առկա հնագույն պատկերացումների վերլուծությանը: Նպատակն է նյութի հանգամանալի ուսումնասիրությամբ և եղած տեսակետների քննությամբ հնարավորինս լուսաբանել ժայռարվեստի ոլորտի խնդիրները, ձևավորման նախադրյալները, զարգացման սկզբունքները և օրինաչափությունները, ժայռապատկերաբանության գիտաճյուղում առաջադրել նոր հարցադրումներ, առաջարկել մեթոդներ և լուծումներ: Կարևոր է ժայռապատկերի իրապես արժևորումը՝ որպես պատմամշակութային հավաստի աղբյուրի, ինչպես նաև՝ ըստ տոմարական և աստղագիտական կիրառականության:

**Առաջին** խնդիրը սկզբնաղբյուրների վկայակոչմամբ պատմաքննական անդրադարձն է հայ մատենագրության և նոր շրջանի գիտության նյութերին: **Երկրորդը** ժայռանկարների բովանդակության և քարակոթողների համատեղ բնութագրումն է՝ աստղագիտական իմաստի և կիրառելիության չափանիշներով, համադրելով մշակույթի մյուս ոլորտների՝ տիեզերաբանական իմաստակրությամբ բազմազան նյութերին: **Երրորդը** ժայռարվեստի և առնչակից ոլորտների շրջանակներում պատմագիտական պարզաբանումներն են, որոնք վերաբերում են Հայաստանում ժայռապատկերաբանական մտքի ծագմանը, պատկերի թվագրմանը, տոմարական գործառույթին, նաև՝ հնադարյան արվեստի և գիտության ակունքներին: Ըստ այդմ՝ աշխատանքն իրականացված է պատմագիտական, նկարագրական, վերլուծական, համեմատական և տեսական ընդհանրացման ուղղություններով: Մեթոդաբանությունը զարգացվում է դասակարգման հիմունքների և թվագրման աստղագիտական եղանակների մշակմամբ և արդյունքների կիրառման հեռանկարների գնահատմամբ:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:** Հետազոտության ժամանակային տիրույթը Հայաստանում ժայռապատկերման սկզբնավորումից մինչև միջնադարն է[1]: Տեղագրական առումով, հիմնականում ընդգրկված է Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների պատմամշակութային նյութը: Կոթողների բաշխումը ցուցադրված է հեղինակային հինգ քարտեզներում: Համեմատական հարուստ նյութ են տալիս աշխարհի այլ վայրերի ժայռապատկերները:

**ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ** (աղբյուրների և գրականության տեսություն): Հայաստանի ժայռարվեստի հետազոտման մեջ որոշակի է երկու փուլ: XIX դ. վերջին և XX դ. I կեսին հիմնականում նկարագրական հաղորդումներ են: Հաջորդում՝ 60-ական թթ. վերջից, հրատարակվեց նպատակային գիտարշավների նյութով, պատմա-համեմատական մոտեցմամբ արված ակադեմիական չորս ծավալուն մենագրություն[2]:

Հազարավոր սկզբնաղբյուրների և տասնյակ ուսումնասիրությունների առկայությամբ հանդերձ, նյութը դեռևս լրիվ չի լուսաբանված, հատկապես սույն ատենախոսության հիմնախնդիրների կտրվածքով: Քիչ են հրատարակվել լուսանկարներ և քարտեզներ, չի արժևորվել պատկերների ճշգրիտ տեղի, կողմնորոշման և փոխադարձ դիրքի նշումը: Ժայռարվեստի և հնագույն աստղագիտության հետազոտման բնագավառում տեղ են գտել նաև փաստական նյութով ոչ լիարժեք հիմնավորված մեկնաբանումներ ու պնդումներ:

---

1 Ժայռապատկերների հնությունը սահմանափակված է վերջին հալոցքի՝ հոլոցենի փուլով (մ.թ.ա. X հազ.): Պատկերների տարածման հիմնական վայրերում (2700-3300 մ) կենսագործունեության նպաստավոր պայմաններն ապահովվել են ավելի ուշ: Գրավոր փուլում վերապրուկային դրսևորումներ կան ըստ տեսքի, ոճի, տեխնիկայի և արտահայտած իմաստի: Ձևիմաստային տարրերը հարատևել են կոթողի և իրի ձևերում ու նախշերում, որմնանկարի, մանրանկարի և գորգի հորինվածքում: Որոշ տարրեր կան պարի և տարազի ոլորտներում, ճարտարապետական փոքր ձևերում և մեհենագրերում:

2 **Կարախանյան Գր.Հ., Սաֆյան Պ.Գ.**, Սյունիքի ժայռապատկերները, Եր., 1970; **Մարտիրոսյան Հ.Ա.**, **Իսրայելյան Հ.Ռ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971; **Մարտիրոսյան Հ.Ա.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1981; **Սարդարյան Ս.**, Հայաստանի ժայռապատկերները քարի դարից մինչև բրոնզի դար, Եր., 2010:

Որոշ օտար հեղինակներ Արցախի, Նախիջևանի, Արևմտյան Հայաստանի և, առհասարակ, Հայոց բնատարածքի ժայռարվեստի նյութը, պատմահնագիտական ու պաշտամունքային վայրերի անունները ենթարկել են աղավաղման, մշակույթի էթնիկ պատկանելության նենգափոխման: Հատկապես թուրք և ադրբեջանական իշխանությունների հրահանգով, շարունակվել է մշակութակործան եղեռնը՝ մշակույթի բռնազավթման, ոչնչացման և պատմաշխարհագրական ոլորտներում զեղծարարության միջոցով[3]: Ուստի, առաջնահերթ է դառնում Հայաստանի ժայռապատկերների և հնաստղագիտական հուշարձանների՝ հայագիտական ճիշտ հայեցակարգով համահավաք ուսումնասիրությունը:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔՈՒՄ** չորս բնույթի սկզբնաղբյուրներ են՝ **1.** Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքի մոտ 70 հայտնի հնավայրերից 60-ում մեր հետազոտած մի քանի հազար ժայռապատկեր, մոտ 50 բնակելի, պաշտպանական, ծիսապաշտամունքային կառույց և 10 երկնադիտական կառուցվածք, **2.** հրատարակված ժայռապատկերների արտանկարներ ու հնագիտական պեղածո նյութ, **3.** լեզվական, բանահյուսական և ազգագրական նյութեր, **4.** անտիկ շրջանի հունա-հռոմեական ու միջնադարյան հայ իմաստասերների, պատմիչների և մատենագիրների երկեր, **5.** համացանցի նյութեր՝ հնավայրի և արտեֆակտի բնութագրեր, լուսանկար, կոորդինատ, սովորական և արբանյակային քարտեզ, սկզբնաղբյուր տեքստ ևն:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ** պատմաքննական մոտեցումն է, աղբյուրագիտական տվյալների քննությամբ, նաև՝ լրացմամբ ու նորովի մեկնաբանմամբ: Աշխատանքն արված է սկզբնաղբյուրների փաստերի դասակարգման, համադրման ու համեմատության, համակողմանի և քննական վերլուծության սկզբունքներով:

Որպես իրականության արտացոլման միջոց, մարդկային հանրույթի աշխարհայացք կրող, ժայռապատկերը և հարակից նյութը դիտարկված են ձևի ու բովանդակության միասնության, կայունության ու փոփոխականության պատմափիլիսոփայական իմաստավորման դիրքերից: Ուսումնասիրությունը լրացվում է այլ գիտաճյուղերի վերլուծական սկզբունքներով ու գիտական կառույցով: Նախապատվություն է տրվում հուշարձանի *in situ* հետազոտմանը, կարևորվում է արբանյակային GPS դիրքանշման միջոցով աշխատելու մոտեցումը:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսության փաստագրական հիմքում Հայաստանի ժայռապատկերների և հնաստղագիտական կոթողների հետազոտությունն է: Գեղամա և Վարդենիսի լեռներում այն սկսել ենք 1987 թ., արդյունքում հաստատելով հրատարակված հազարավոր արտանկարների մեծագույն մասի իսկությունը և ճշգրիտ

3 Տե՛ս **Սարգսյան Ե.Ղ.**, **Սահակյան Ռ.Գ.**, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Եր., 1963; **Մարտիրոսյան Հ.Ա.**, Քարի դարից Ուրարտու, Եր., 1971, էջ 23-24; **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Եր., 1995; **Նահապետյան Հ.**, Թուրք-ադրբեջանական կառույցների հակահայ գործունեությունը, Եր., 2010; **Danielyan E.** Turkish-Azerbaijani Falsifications of the Armenian Toponyms as an Indication of the Genocidal Policy.- Բանբեր հայագիտության, 2013, 1, էջ 159-179: **Ջիհանյան Վ.**, Հայկական լեռնաշխարհի ու հարակից շրջանների տեղանուններ. հետադարձ բառարան, Եր., 2015:

տեղը: Տարիներ անց գիտարշավներն ընդգրկեցին Արագածի հվ-արլ. լանջերը, Սյունիքը, Վայքի լեռները, ազատագրումից սկսած՝ Քարվաճառի լեռնային տարածքը:

Լուսանկարահանման ու չափագրման միջոցով, համացանցային պահուստի և Google Earth գեոտեղեկատվական համակարգի օգնությամբ ձևավորվեց ՀՀ և ԱՀ, հետագայում էլ՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհի և շրջակայքի մոտ 4000 ժայռապատկեր ու հարակից հնագիտական նյութերով հնավայրեր պարունակող **շտեմարան**, որում տվյալներն ու լուսանկարները դասակարգված են էլեկտրոնային քարտեզի տեսքով:

Առավել ընդլայնվել է հետազոտության դաշտը՝ շրջանառության է դրվել ՀՀ և ԱՀ տարածքում մեր գրանցած մոտ 3500 նորահայտ ժայռապատկեր ու երկու տասնյակ ծիսապաշտամունքային և երկնադիտական կառուցվածք: Հնագիտական ու ճարտարապետական, լեզվական ու մատենագրական, հնաստղագիտական ու տոմարական, բանահյուսական ու ազգագրական նոր նյութի ընդգրկման արդյունքում բացահայտվել են մի շարք աղերսներ ժայռարվեստի և պատմամշակութային մյուս ոլորտների միջև, հնարավորինս լուսաբանվել են դրանց օրգանական կապերն ու ձևավորման նախադրյալները:

Որոշակիացվել են ժայռանկարների **տեսակները**, **թեմաճոճական բաշխումը**, մշակվել է դասակարգման համակարգ: Ձևակերպվել են «***ժայռապատկերաբանություն***» գիտաճյուղի հիմունքները՝ հայեցակարգը, դրույթները, մեթոդական կառույցը, հասկացութային հենքը (սահմանումներ, եզրաբանություն, չափորոշիչներ), նաև՝ հետազոտման կարգը և փուլերը:

Մշակվել և շրջանառության են դրվել ժայռապատկերի **բացարձակ թվագրման աստղագիտական եղանակներ**: Առաջինով թվագրվել է Վարդենյաց լեռնանցքի 10 աստղաքարտեզ (4600±200 տարի ճշտությամբ): Երկրորդը դեռևս տեսական փուլում է և կարիք ունի պեղումներով, բնագիտական մեթոդներով և տեխնիկական միջոցներով հաստատման:

Փաստական տվյալների մեծ մասը (լուսանկար, դիրք, հեռավորություն, անկյուն) ստացվել է էլեկտրոնային սարքերի և բնագիտական եղանակների կիրառմամբ: Վերլուծական արդյունքի հավաստիությունն ապահովվել է համակարգչային ծրագրերի շնորհիվ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ** պայմանավորված է գիտաճանաչողական ու կիրառական ուղղվածությամբ: Հետազոտությունն օգտակար կլինի պատմագիտության, հնագիտության, ազգագրության, երկրագիտության, մշակութաբանության, բանասիրության, աստղագիտության, տոմարի, գրի, բնագիտության պատմության և այլ ոլորտներում: Այն կարող է տեղեկատու և բուհական ձեռնարկ դառնալ, նպաստել հայրենաճանաչությանը, հետաքրքրել ընթերցող լայն շրջանակներին: Տեղորոշված, դասակարգված ու մեկնաբանված նյութն արդիական է հուշարձանների պահպանության, դրանց հանրայնացման ու գիտամշակութային շփումների ասպարեզներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Հիմնական արդյունքներն արտահայտված են 2002-2019 թթ. հրատարակված 25 գիտական հոդվածներում, 1995-2019 թթ. հանրապետական և միջազգային գիտաժողովների 45 զեկուցումներում, այդ թվում՝ 2002-2019 թթ. արտասահմանում (Վրաստան, Իտալիա, Ռուսաստան, Հունաստան, Ղազախստան, Չինաստան), բազմիցս լուսաբանվել գի-

տահանրամատչելի հանդեսներում, հանրայնացվել հաղորդումներում ու համացանցում:

Աշխատանքը քննարկել ու դրական երաշխավորությամբ հրապարակային պաշտպանության է ներկայացրել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժինը:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:** Ատենախոսությունը կազմված է Ներածությունից, երեք Գլխից, Եզրակացությունից, օգտագործված աղբյուրների, գրականության և հապավումների ցանկերից: Բուն շարադրանքը 189 էջ է, ընդհանուր ծավալը՝ 254 էջ:

Ատենախոսությունն ունի չորս հավելված (252 էջ): Առաջինում զետեղված է աշխարհի, մեր տարածաշրջանի, Լեռնաշխարհի, ՀՀ և ԱՀ ժայռապատկերային հնավայրերի հինգ քարտեզ՝ հնավայրերի ցանկերով, նաև՝ վերականգնված և անվանափոխված տեղանունների ցանկը: Երկրորդում ժայռապատկերի միջավայրի և ուղեկցող նյութի նկարագրության առաջարկվող համակարգն է: Երրորդում ներկայացված են լուսարևային իմաստ կրող հատուկ անուններ: Չորրորդ հավելվածում ժայռապատկերային ու հարակից նյութն է՝ 199 աղյուսակ: Առանձին ցանկով նշված է յուրաքանչյուր լուսանկարի պահը և հեղինակը, հրատարակման հղումը (կամ այլ աղբյուր) և իրի թանգարանային գույքահամարը (30 էջ):

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունը** ներկայացնում է թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, ուսումնասիրման առարկայի տարածաժամանակային ընդգրկումը և հետազոտվածության աստիճանը, աշխատանքի աղբյուրագիտական ու մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ատենախոսության փորձանցումը, մատենագիր աղբյուրների և գրականության տեսությունը:

### ԳԼՈՒԽ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

**1. Ժայռապատկերը որպես պատմամշակութային սկզբնաղբյուր**

Հնադարյան մշակույթի այս ասպարեզում պարզորոշ է առնչակցությունը մշակույթի այլ ճյուղերին (արվեստ, պաշտամունք, լեզու և գրականություն, երաժշտություն ու պար, շինարվեստ ու տեխնիկա, գիտություն ու կրթություն, մարզարվեստ ու մարտարվեստ ևն), հատկապես զգալի է ազդեցությունը հետագա շրջանների գրահամակարգերի և պատկերային արվեստի մյուս ոլորտների վրա: Հայաստանում դրանց մեծ քանակությունը, պահպանվածությունը, բովանդակային հարստությունը և տեսականին, նպատակային գործունեության այս ոլորտում նախնյաց ցուցաբերած հատուկ՝ սրբազնացված և ակնածալի վերաբերմունքի արդյունք են: Ժայռապատկեր ստեղծողների այսօրինակ դիրքորոշումը, ինքնին, որոշակիորեն փաստում է սկզբնաղբյուրների հավաստիությունը:

**2. Ժայռապատկերների ուսումնասիրման հիմունքները. դասակարգում**

Յուրաքանչյուր սկզբնաղբյուրի հավաստիությունը, ուստի և՝ աղբյուրագիտական արժեքը մեծապես կախված է ուսումնասիրման աստիճանից, հետազոտման ելակետից և միջոցներից: Լիարժեք հետազոտման նախապայմանը դասակարգումն է: Այն իրականացվում է ըստ ձևավորման ընթացքի՝ **քարաբեկորի** բնութագրերի, պայմանավորված ստեղծող-փոփոխող բնական գործոններով և **ժայռապատկերի** (պատկերակիր քարաբեկոր)

բնութագրերի՝ պայմանավորված ստեղծող-փոփոխող մարդկային գործոններով: Այսօրինակ դասակարգման մեջ առանցքային է ժամանակը՝ բնական քարաբեկոր - պատկերում - ժայռապատկերի փոփոխում: Դրա շնորհիվ առավելագույն տեղեկություն է կուտակվում նաև թվագրման համար: Դասակարգման մեր համակարգն ընդգրկում է ժայռարվեստի կոթողների կազմը և կառուցվածքը, տեղաբաշխումը և գոյության պայմանները, ժամանակը և զարգացման փուլերը, հետազոտման ձևերը, ուսումնասիրվածության աստիճանը և գործառույթը: Ժայռապատկերը նկարագրվում է յոթ խմբում ամփոփված 365 տվյալով, որոնք բնութագրում են հնագիտական միավորը, քարաբեկորը, պատկերակիր մակերեսը, պատկերակոսը, պատկերը, խմբայնությունը և հուշարձանի միջավայրը[4]:

**3. Հայաստանի ժայռապատկերների հայտնաբերման պատմությունը**

Հայտնաբերումը և նկարագրումը Հայաստանում սկզբնավորվել է 1886 թ.: 140 հնավայրերում այժմ հայտնի է մոտ 12 հազար ժայռապատկեր: Ըստ հայտնաբերման ժամանակի և տեղի՝ պատկերային նյութը ներկայացված է Հավելվածի 93 աղյուսակներում[5]:

**4. Ժայռապատկերների տիպաբանական բնութագրումը**

**Տեղադրությունը**[6]: Աֆրիկա-եվրասիական տարածաշրջանում հնավայրերն առավել խիտ են Հայկական լեռնաշխարհում, որից դուրս զգալիորեն նվազում է դրանց թիվը, պատկերների քանակը, խտությունը և բազմազանությունը: Հայաստանում հնագույն ժայռանկարների բաշխումն ուրվագծում է կենտրոնացվածություն Այրարատ աշխարհի շուրջ:

**Բարձրալեռնային** գոտում (2000-3300 մ) բազմահազար ժայռապատկերներ են հայտնաբերվել Գեղամա, Վարդենիսի, Թեքսարի, Վայքի, Սյունիքի, Զանգեզուրի, Քարվաճառի, Շատախի, Սաթ ու Կորդվաց լեռների և Արագածի լանջերին:

**Հարթավայրային ու ցածրալեռնային** վայրերում (400-2000 մ) հնագույն փորագիր պատկերներ կան Դեմիրկապ (450 մ), Դինջիր (600 մ), Նեղոց (650 մ), Փական (960 մ), Օշական (1020 մ), Ոսկեհատ (1050 մ), Շամիրամ (1150 մ), Գոշ (1200 մ), Քարձոր (1550 մ), Ծաղկա և Ցուրտագետ (1600 մ), Կոճանց (1800 մ) գյուղերի մոտ և Շուշիի եզրին (1310 մ), Կոմագենեի Փիրին վայրի «Այծերի» (740 մ) և «Համետ» (1050 մ) անձավներում, Կարսի շրջակայքում՝ Ալամ (1490 մ), Գետիկ (1600 մ), Ազատ (1800 մ), Բորլուկ (2000 մ) գյուղերի

---

4 Տե՛ս **Թոխաթյան Կ.**, Ժայռապատկերների ուսումնասիրման հիմունքները.- ՀՊՊԹ «Հայոց պատմության և մշակույթի հարցեր» գիտ. նստաշրջանի զեկուցումներ, Եր., 1997, էջ 41-42; **Тохатян К.С.**, Наскальные изображения Великой Армении: астрономические рисунки и строения.- Сборник материалов Международного семинара-тренинга по историко-культурному наследию стран СНГ, Алматы, 2011, էջ 170; **Tokhatyan K.S.** Rock Carvings of Armenia.- Fundamental Armenology, NAS RA, 2015, 2, էջ 193:

5 Ատենախոսության մեջ հնավայրերի տեղը նշված է ըստ պետականության փուլերի՝ Մեծ Հայքի աշխարհը և գավառը («Աշխարհացոյց»-ի համաձայն), ՀԽՍՀ շրջանը և ՀՀ մարզը, ԱՀ շրջանը:

6 **Թոխաթեան Կ.**, Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ.- Բազմավէպ, 2003, 1-4, էջ 81-90; **Թոխաթյան Կ.**, Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների քարտեզագրումը.- «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Եր., 2015, էջ 332-335; **Тохатян**, էջ 169; **Tokhatyan**, էջ 185-187:

մոտ և Կատրան, Կերվան, Իկիսու, Սևքար վայրերում: Գունանկարները ցածրադիր են, գտնվում են Տիգրիսի աջափնյակում (600 մ), Փականում, Մալաթիայի մոտ՝ Առյուծաբլուր (930 մ), ՀՀ Փոկաբերդ (1300 մ), Լոռիբերդ (1400 մ), Գեղամավան (1700 մ), Կաքավաձոր (1700 մ) հնավայրերում: Ցածրադիր են նաև բրոնզ-երկաթիդարյան հնավայրերի ժայռափորագրերը՝ Մեծամոր (850 մ), Արմավիր (870 մ), Ագարակ (1100 մ), Ջովունի (1170 մ):

Ակոսապատկերները ևս բարձրադիր չեն և նույնպես հիմնականում բրոնզ-երկաթիդարյան ամրոցներում են՝ Մաղարաբլուր (865 մ, Արարատի հս-արմ. լանջ), Անդաբի դամբարան (1110 մ, Արածանիի վերնագավառ, Բագրեևանդի հվ-արմ. մաս), Պարտիզակ (1200 մ, Ծոփք), Զամբիլ (1300 մ, Կապուտանի արմ. ափ), Բաստամ (1300 մ, Կապուտան լճից հս.), Բագայառիճ (1450 մ), Արուճագրակ (1560 մ, Արաքսի վերին հոսանք, Բասեն), Հոռոմ (1640 մ), Արդիճ (1700 մ, Խաղտյաց լ-շղ.), Վանա լճի ափերին՝ Արտամետ (1670 մ), Դատվան (1700 մ), Փանզ (1700 մ), Օրորան (1700 մ) և շուրջը՝ Հայկաբերդ (1785 մ), Վանի միջնաբերդ (1820 մ), Գայթիս (1940 մ), Վերին Անձավ (1975 մ):

Միջինքարիդարյան սալաքարային բարձրաքանդակներ կան Ուռհայի մոտ՝ Պորտաբլուրում (760 մ), ցածրադիր պատկերախմբեր՝ Կասպից ծովի մերձափնյա Կաբրիստանում (45-180 մ) և Ապշերոն թերակղզում (1-30 մ):

**Ժամանակաշրջանը:** Ժայռապատկերի դեպքում չեն գործում հասակագրման ավանդական շերտագրական ու նյութագիտական եղանակները: Համարվում է, որ Հայաստանում ժայռապատկերման ոլորտը սկզբնավորվել է մ.թ.ա. VII-V հազ. միջև՝ նստակեցության ու երկրագործությանն անցնելուն համընթաց, և աստիճանաբար անկում ապրել՝ գրի զարգընթացի հաջորդ, առավել հարմար համակարգերի լայն կիրառման հետևանքով: Ժայռապատկերման ավանդույթի դրսևորումներ՝ հնագույն պատկերների ոճով փորագրություններ կան անտիկ ու միջնադարյան կառույցներում և անձավներում:

**Միջավայրը և ուղեկցող նյութը:** Ժայռապատկերը սերտ կապված է շրջակա բնական միջավայրին, որում, միաժամանակ, ձևավորում է մարդածին՝ մշակութային տարածություն: Ուստի այն դիտարկվում է բնապատմական համապատկերում՝ շրջապատի և ուղեկցող հնագիտական նյութի լիակատար նկարագրության և հետազոտման միջոցով: Յուրաքանչյուրի համար նշվում է. **1.** տեղը և տեղանքի բնույթը; **2.** բնապատմական միջավայրը; **3.** խմբայնությունը; **4.** մերձակա բնական տարրերը; **5.** մերձակա հնագիտական միավորները; **6.** ուղեկցող հնագիտական նյութը; **7**. ուղեկցող տեղեկատվական նյութը; **8.** մոտակա արհեստական ժամանակակից տարրը; **9.** պատկերվածի համապատասխանելն այդ ուղղությամբ երևացող իրողությանը: Նշվում է տարրի և միավորի հեռավորությունը և ուղղությունը, երբեմն էլ՝ հետքերն ու տեղեկությունները նախկինում եղած որևէ միավորի:

**Տեսակները և վիճակները:** Ժայռապատկերն անմշակ քարամակերեսին գործիքով արված իմաստակիր հետք է՝ նկար կամ նշան: Ըստ այդմ, բաժանվում են երկու մեծ դասի. պատկերային և ոչ պատկերային՝ պատկերագիր /pictogram/ և գաղափարագիր /ideogram/:

Դրանք դասդասում ենք նաև՝ **1.** ըստ տեղեկատու հետքի տեսակի՝ փորագիր (ակոսային) և ներկանկար, **2.** ըստ ակոսի ձևավորման եղանակի՝ բրածեծ, խորաքանդակ, հղկա-

նկար, փայլանկար, շերտահատ, լցանկար, քերծանկար և խառը, **3.** ըստ պատկերագրման չափի, **4.** ըստ պատկերակիր մակերևույթի տեղադրության՝ բացօթյա, անձավային, պեղածո և ջրասույզ, **5.** ըստ պատկերակիր մակերևույթի ձևի՝ քարաբեկորային կամ հարթաժայռ (անձավային, ժայռապատային և ափատարած), **6.** ըստ հորինվածքում առկա ինքնուրույն պատկերատարրերի քանակի՝ միապատկեր կամ բազմապատկեր, **7.** ըստ քարաբեկորի պատկերակիր նիստերի թվի՝ միանիստ կամ բազմանիստ, **8.** ըստ ուսումնասիրման մատչելիության՝ դժվարամատչելի կամ անհասանելի, **9.** ըստ տարածական իրականացման եղանակի՝ նկարված, քարամակերեսային և կառուցված՝ գետնապատկեր, **10.** ըստ խմբայնության՝ մեկուսի և խմբային:

Մի շարք Ժայռապատկերների դիրքը և նկարակիր մասը ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխության: Հնարավոր ենք համարում հուշարձանի երեք վիճակ. **1.** ըստ փորագրումից հետո **տեղաշարժի**, **2.** ըստ **վնասվածքի**՝ փորագրումից հետո բնական ու մարդածին գործոնների ազդեցությամբ կրած փոփոխության՝ ճաքած, կոտրված, շերտազատ, քարաքոսապատ, վնասարարության հետևանք՝ խազ, գրառում, **3.** ըստ պատկերման **շերտերի** և **հաջորդայնության**՝ նախանկար, անավարտ, վերանկար, կրկնանկար և վրանկար: Այս տարաժամանակյա ազդեցությունները կարող են հարաբերական թվագրման իրական հնարավորություն ընձեռել:

Հայաստանի ժայռապատկերներում առկա է նշյալ տասը տեսակների և երեք վիճակների մեծագույն մասը: Առայժմ հայտնի չէ դասական գետնապատկերի օրինակ:

**5. Ժայռապատկերների բովանդակությունը**

Հայաստանի ժայռապատկերների բովանդակային բազմազանության մեջ որոշակի է 4 հիմնական ոլորտ՝ **բնություն, մարդու առօրյա, արարման արդյունքներ** և **ներաշխարհ**: Դրանցում առանձնացրել ենք **31** թեմային խումբ. տեղանքի տարր, Երկրագունդ, երկնային լուսատու և երևույթ, օդերևույթ, երկրային երևույթ, բույս, կենդանի, գյուղատնտեսություն, որս, գազանամարտ, մարտարվեստ, մարզում, մրցախաղ, պար, զենք, գործիք, փոխադրամիջոց, շինվածք, կիրառական պատկեր, ուսուցման միջոց, խաղի պարագա, հագուստ, պաշտամունք, երևակայական էակ, ներպատկեր, դիմապատկեր, անորոշ պատկեր, զարդանախշ, խորհրդանշան և տառանման նշան: Բնականաբար, անգամ մեկ ժայռապատկերի հորինվածքում, այս թեմաները հաճախ միահյուս են, սերտաճած՝ իրար համալրելով:

Բովանդակային խմբերի պատկերների և ոճերի մեծ մասը հարատևել է հայ մշակույթի մյուս ոլորտներում՝ խեցեղենի, արձանիկի, բրոնզե գոտու և նվիրատվական թիթեղի, հարթաքանդակի, որմնանկարի և մանրանկարի իմաստաբանական հորինվածքում, զինանշանի, կնիքի և դրամի նկարվածքում, զենքի, խոյակի նախշազարդում, տարազում ու հյուսածո իրերում և լրացվել նորանոր նշաններով: Սկզբնապես՝ հնագույն պատկերներում, գրեթե բոլոր էակները, իրերն ու երևույթները բնական որևէ իրողության դիտման պարզ կամ գեղարվեստորեն արտացոլման արդյունք են: Երբեմն առկա է իրականի ծիսականացում, գերբնականացում, երևակայական բովանդակություն: Մշակույթի հետագա փուլերում արդեն՝ առավել շեշտվել է արարման ծիսական մտահղացումը և խորհրդանշանային բնույթը, հատկապես՝ գոտու, քանդակի, մանրանկարի, զինանշանի, գորգի հորինվածքում:

**6. Ժայռանկարի պատկերաոճը և կատարումը**

Ժայռանկարի պատկերաոճը, սովորականից բացի, լինում է **10** այլ տեսակի՝ պատկերագրական հաստատունով, իրապաշտական, սխեմային, երկեռանկյուն, այլագրում, շարժուն, չափազանցված, երկակի արտապատկեր, հեռանկար, համայնապատկեր:

Ժայռապատկերի կատարումը սովորական՝ միանիստ, «դասական» ակոսային տեսակից բացի, իրականացվել է **երեք** այլ կերպով՝ բազմանիստ, շրջափորագիր, շարժապատկեր: Ժայռապատկերի կատարման փուլայնությունը սովորական՝ ավարտուն, միանվագ աշխատանքից բացի, կարող է լինել **չորս** այլ աստիճանում՝ նախանկար, անավարտ պատկեր, կրկնանկար, վրանկար և տեխնիկապես անկատար[7]:

**7. Ժայռապատկերի առնչակցությունը հայ մշակույթի մյուս ոլորտներին**

Կերտման ժամանակի վաղ ու միջին փուլերում (մ.թ.ա. VII-IV հազ.) իմաստաբանությամբ ու ձևաոճական բնութագրերով ժայռապատկերը համադրելի է նորաքարի և պղնձաքարի կառուցողական արվեստի կոթողների, կենցաղային ու զինական իրերի, դեկորատիվ-կիրառական արվեստի առարկաների հետ, իսկ ուշ փուլում (մ.թ.ա. III-II հազ.)՝ բրոնզե գտածոների, արձանիկների և հմայական իրերի հետ: Այս ամենն ընձեռում է հարաբերական թվագրման իրական հնարավորություն:

Ժայռանկարների որոշ իմաստակիր տարրեր մ.թ.ա. II-I հազ. վերարտադրվել են բրոնզե գոտու և թիթեղի, կնիքի և դրամի պատկերագրության մեջ ու նախշազարդում: Հնագույն ու կայուն մոտիվները, արտահայտչական ու բովանդակային տարրերն արտացոլվել են որմնանկարի, մանրանկարի, հյուսքի և գորգի հորինվածքում: Քարի փորագրման հմտությունը հարատևել է կառուցողական ու դեկորատիվ արվեստում, բոլորաքանդակում ու հարթաքանդակում, սեպագրերում ու վիմագրերում:

Ժայռանկարն աղերսվում է մշակույթի մյուս ոլորտներին ևս՝ մարտարվեստ ու մարզարվեստ, պար ու թատերախաղ, դիցաբանություն ու ծես, այբուբեն, քարտեզ, տոմար, գրական-բանահյուսական ճյուղեր: Ժայռարվեստն դրանց միահյուս է մշտական թեմայի և ոճի առկայությամբ, սյուժեի կառուցման պատմողական-պատկերագրական ընդհանրությամբ:

**8. Հայաստանի ժայռարվեստը համաշխարհայինի համապատկերում**

Աշխարհի մոտ 20 հազար հնավայրերի միլիոնավոր ժայռապատկերների բովանդակային, թեմային և ոճատեխնիկական բաշխումը որոշակիորեն տարբեր է հայաստանյանից: Վերոնշյալ 31 խմբերի և 17 ոճակատարողական տեսակների մի մասն այլ վայրերում բացակայում է կամ թույլ է արտահայտված: Հայաստանի ժայռանկարներում չկան կենցաղային ոչ կարևոր, դաժան, անպատշաճ տեսարաններ, ինչը ևս մի վճռորոշ փաստարկ է հնագույն հայոց աշխարհընկալումների արտացոլում հանդիսացող ժայռափորագրման ոլորտի բարձրարժեքության և նախնյաց արժեհամակարգային չափանիշների գոյության:

Աֆրիկա-եվրասիական տարածաշրջանում գտնված հին պատկերների տեղագրական և թեմաոճային բաշխումն ուրվագծում է սփռվածություն Հայկական լեռնաշխարհից, ինչը մշակույթի մի շարք ճյուղերի տարածման ևս մի առարկայական վկայություն է:

---

7 Տե՛ս **Թոխաթյան Կ.**, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը.- ՊԲՀ, 2016, 2, էջ 180-197:

## ԳԼՈՒԽ Բ. ՀՆԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հայոց բազմահազարամյա քարեղեն ժառանգության մեջ առանձնանում է տիեզերագիտական շերտը՝ մարդու պատկերացումներն աշխարհակառույցի, երկնոլորտի, երկնային երևույթների, տարեղանակի, օր ու տարվա վերաբերյալ:

### 1. Աստղագիտական բովանդակության ժայռապատկերներ

Հայաստանի ժայռապատկերներում առատորեն են ներկայացված լուսատուները՝ Արև, Լուսին, մոլորակ, աստղ, աստղախումբ, համաստեղություն, Կենդանաշրջան, Ծիր Կաթին, նաև երկնային որոշ երևույթներ՝ խավարում, ասուպ, գիսավոր: Արտացոլված են Երկրագունդ, երկրային երևույթներ (արևածագ, արևամուտ, հրաբուխ) և օդերևույթներ (կայծակ, ծիածան, ամպ): Կան տարատեսակ օրացույցներ (լուսնարեգակնային, արեգակնային, աստղային), աստղագիտական գրանցման աղյուսակ, ակոսապատկերներ ու գաղափարագրեր: Այդ ամենն իրենց պատկերագրական և իմաստաբանական զուգահեռներն ունեն հնագիտական, ազգագրական ու մատենագիր աղբյուրների նյութերում:

### 2. Հնաստղագիտական միտքը կառուցվածքներում

Հայաստանում ևս լուսատուներին, երկնային և երկրային երևույթներին առնչվող պատկերացումները դրսևորված են տակավին վաղ հնաքարի կառուցողական արվեստում՝ կացարանի, բնակատեղիի, դամբարանի ու հսկայակերտ շինվածքների հատակագծային ու ծավալատարածական լուծումներում:

**Բնակեցված այրերի** մեծ մասի մուտքերը լուսահայաց են, ինչը նպաստում է ջերմության ու լույսի առավել երկարատև ապահովմանը: Պաղաղբյուրի անձավախորշի արևելահայաց պատի բազմատարր ժայռանկարը լրիվ լուսավորվում է միայն ցերեկը: Փականի և Բութի անձավապատկերները մուտքի առավել լուսավոր մասում են: Քարանձավի խորքից գիշերը կարող էր դիտվել լուսատուի ծագումը և մայրամուտը, աստղերի տեղաշարժը մուտքի եզրագծի նկատմամբ:

**Դամբարանի** և **դամբանադաշտի** կառուցվածքը և տեղադրությունը ևս կրում են լուսարևային ընկալումների ազդեցությունը, և բնականաբար՝ հիմքում ունեն երկրային և երկնային կյանքի մասին դիցաբանական պատկերացումներ: 2700-3400 մ բարձրություններում կան 10-50 մ չափերի մեծաքար հսկայակերտ շինվածքներ՝ մարդահասակ պարսպաշար, բջջային, կլոր ու քառանկյուն հիմքով շարվածք: Կան տասնյակ քարաբուրգեր, «հսկայի տներ»՝ հարթասալերով կիսաձակ կացարաններ ու քարակոյտերում բացված «ջրհորանման» փոսեր: Այս տարատեսակ շինությունները կարող էին կերտված լինել ոչ միայն կենցաղային, պաշտպանական, այլև ծիսապաշտամունքային և երկնադիտական՝ լուսատուի ծագման ու մայրամուտի, երկնային և երկրային այլ երևույթների դիտման նպատակով:

**Քարե կոթողներն** ու **շարքերը** կարող էին արտացոլել նաև աստղագիտական-տոմարական պատկերացումներ՝ ծառայել որպես Երկրի կողմերի, Արևի, Լուսնի, պայծառ լուսատուների ծագման ու մայրամուտի ցուցիչ, օրերի, ամիսների, տարիների, հավանաբար նաև՝ խավարման հաշվարկման միջոց: Այս առումներով, քարաշարքը, «սրբազան ճանապարհ» լինելուց բացի, դիտարկելի է իբրև միջին օղակ՝ թասաձև փոսիկաշարի և հսկա

գետնապատկերի միջև: Նման շարքեր կան Զորացքար, Կողես, Տանձուտ, Դատվան, Լեզք, Նավուր, Աշոցք, Հարթաշեն հնավայրերում: Այս կառուցվածքների և կոթողների մոտ հաճախ կան ժայռապատկերներ:

Հայտնի երկնադիտական կառուցվածքներից բացի (Մեծամոր), հնաստղագիտական ու տոմարագիտական փաստեր ենք լուսաբանել Հայաստանի այլ հնավայրերում՝ Սևսար, Վարդենյաց լեռնանցք, Զորացքար, Աստղաբերդ, Ագարակ, Արփի: Պորտաբլուր տաճարսրբավայրում համաստեղություններում արտացոլված կենդանիների բարձրաքանդակներ կան (թեև դասավորությամբ չեն համապատասխանում այդ աստղատների թե՛ անցյալ, և թե այժմյան դիրքերին): Հնագույն պաշտամունքային կառույցներում գերակշռող երկրակողմ ուղղվածությունն արտահայտված է նաև Մուծաձիրի, Գառնու և Կոմագենեի դամբարան-սրբավայրի հատակագծային-ծավալատարածական լուծումներում ու դեկորում:

**3. Տիեզերաբանական պատկերացումների արտացոլումը ժայռապատկերմանն առնչակից ոլորտներում**

Հայոց մշակույթի առարկայական ոլորտներն առատ են լուսարևային ընկալումների դրսևորումներով: Ժայռապատկերի ոճով նկարվածք, փորագրություն ու մեհենագիր կա ռազմի և կենցաղի պարագաների վրա և կառույցներում: Տիեզերագիտական միտքը նախագրային ու հետագա շրջանում արտացոլվել է լեզվամտածողության մեջ, բառապաշարում (տեղանուն, անձնանուն), ժողովրդական բառ ու բանում, հեքիաթում, բանահյուսության արձակ ու չափածո, երգային, բանաձևային ժանրերում և հատկապես՝ դիցավեպում[8]:

## ԳԼՈՒԽ Գ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

**1. Ժայռապատկերաբանության ձևավորումը Հայաստանում**

Նորօրյա ժայռապատկերաբանությունը սկզբնավորվել է 1886 թ., երբ հայ գիտական մամուլում՝ «Արարատ» ամսագրում ժայռապատկերի արտանկար է հրատարակվել և իրատեսորեն մեկնաբանվել[9]: Հին շրջանում այս գիտաճյուղի ակունքը V-VII դարերում է՝ ոսկեդարյան գրականության էջերում կա ժայռափորագրմանն առնչվող երեք հիշատակում:

Ժայռագրերի գոյություն առաջինը վկայել է Պատմահայրը, մշակութային հերոս Տորք Անգեղի մասին նշելով՝ *գրել... եղնգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս*[10]: Հրաշապատումի ձևով նա պահպանել է ժայռագրության ու տառաստեղծման մի այլ աղերս՝ Մեսրոպ Մաշտոցի երազը. *երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի*[11]: Ժայռապատկերման ոլորտի առկայությունն ու վաղեմությունը հավաստող երրորդ և ամենաուղղակի վկայությունը՝ աստղագիտական բովանդակությամբ ժայռագրերի և դրանց

---

8 **Վարդումեան Գ., Թոխաթեան Կ.**, Հայոց լուսարեւային պատկերացումները (ըստ ժայռապատկերների և ազգագրական նիւթերի).- Բազմավէպ, 2002, էջ 383-407:

9 Տե՛ս **Սմբատեանց Մ.**, Բևեռաձև արձանագրութիւն.- Արարատ, 1886, 11, էջ 499-503:

10 **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913 (Եր., 1991), գիրք Բ, գլ. Ը, էջ 115:

11 **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. ԾԳ, էջ 327:

կիրառականության վերաբերյալ հաղորդել է Անանիա Շիրակացին. *ոչ միայն զարեգական գնացս կարացին նկատել, այլ և զբոլոր լուսաւորացս կարացին դրոշմել և ճանաչել*[12]:

**2. Ժայռապատկերների թվագրման հիմնախնդիրը**

Փորագրի տարիքի որոշումը բարդ է, քանի որ գրեթե անհնար է կիրառել թվագրման ավանդական՝ բնագիտական եղանակները: Որոշակիություն է ապահովում նկարի պատկերագրական, բովանդակային, ոճական ու տիպաբանական առումներով համեմատումը պեղածոների՝ զենքի, գործիքի, փոխադրամիջոցի, հանդերձանքի, կացարանի տեսքի, նաև՝ տեղանքի ու երկնքի գծագրերի հետ: Նպաստավոր է համադրումն այդ իրերի զարդարիկ տարրերի հետ, հատկապես՝ խեցեղենի, զենքի, բրոնզե գոտու և արձանիկի:

**3. Ժայռապատկերների թվագրման աստղագիտական եղանակներ**[13]

Ոչ հարաբերական՝ բացարձակ թվագրման համար հավաստի են աստղագիտական եղանակները: Հայաստանում կա նման հնարավորություն ընձեռող երկու եզակի կոթող.

**Վարդենյաց լեռնանցքի աստղաքարտեզներ** (թվագրման I եղանակ)

Լեռնանցքի բարձրակետում 1965 թ. հայտնաբերված քարասալերին պատկերված են Առյուծ, Աղեղնավոր և Կարիճ համաստեղությունները: Դրանց թվագրման համար 1994 թ. մեր կիրառած եղանակի հիմքում անցյալի տարբեր դարաշրջաններում Առյուծ համաստեղության տեսքի համեմատումն է փորագրվածի հետ. աստղագիտական բանաձևերով փորագրման տարիքը գնահատել ենք 4500±300 տարի: Լրամշակելով մեթոդը՝ հաշվի առանք նաև աստղատան դիտման անկյունը: Տեղում արված չափումների, գիշերային դիտումների, հաշվողական կառույցի կատարելագործման և համակարգչային ծրագրերի կիրառման շնորհիվ մեծացավ թվագրման հավաստիությունը և ճշգրտությունը՝ մ.թ.ա. XXVI-XXIV դդ.:

**Սևասարի երկնադիտարան** (թվագրման II եղանակ)

Սևասարի համալիրը Վարդենյաց աստղաքարտեզներից 9 կմ հս. է, 2670 մ բարձրության բլրի վրա: Կենտրոնական քարի 7 մ$^2$ մակերեսով նիստերին փորագրված են թերթիկավոր համակենտրոն շրջանագծեր, երկու մարդ, ձի, օձ-վիշապներ, աստղանշաններ, կետախմբեր և այլ նշաններ: Նշանախումբն ընդգրկում է Արծիվ, Օձ, Օձակիր, Կարապ, Քնար, Աղվեսիկ, Դելֆին, Նետ համաստեղությունների տիրույթը և Ծիր Կաթնի մի հատվածը: Մերձակա 200x100 մ չափերով տարածքում 1987-2020 թթ. մեր հաշվառած 27 ժայռապատկերի և մի շարք մշակված ձևավոր քարաբեկորների առկայությունը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք երկնադիտական-պաշտամունքային համալիրի մաս ու մնացորդներ են:

Առավել հավանական վարկածով՝ շրջանաձև մասը խոշոր ասուպի պատկեր է[14], ինչը

---

12 **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտութիւն և տոմար, Եր., 1940, ԾԹ, էջ 83-84:

13 Տե՛ս **Tokhatyan K.S.** I reflessi dell'antica conoscenza astronomica nell'arte rupestre dell'Armenia.- Atti del XIII Convegno Internazionale, Genova, 2009, էջ 83-87; **Թոխաթյան Կ.**, Հայկյան օրացույցի ակունքներում.- «Հայկազուններ» ժողովածու, Եր., «Գիտություն», 2013, էջ 225-226, 234:

14 **Թումանյան Բ.Ե.**, **Պետրոսյան Ս.Բ.**, Աստղագիտական բնույթի ժայռապատկերներ.- ԵՊՀ Գիտական Տեղեկագիր, 1970, էջ 19-22: Տե՛ս նաև **Մարտիրոսյան Հ.Ա.**, Նախնադարյան Հայաստանի լուսնաարեգակնային տոմարը.- ԼՀԳ, 1973, 7, էջ 32-40:

խոստումնալից է թվագրման հնարավորություն ընձեռելու առումով: 1997 թ. տեղում նկատեցինք, որ շրջանաձև պատկերի եզրից ձգվող երեք կորագծերն ուղղված են դեպի Աժդահակ հրաբխակոնը (3597 մ, ՀՀ երրորդ գագաթ), որի հիմքի հս-արմ. կողմում տարիներ առաջ նկատել էինք ափսեաձև փոսորակ: Ենթադրեցինք, որ դա երկնաքարի հարվածից առաջացած խառնարանն է, եթե կորագծերով նշված է դրա սլացքի աղեղնագիծը: 1998 թ. չափագրեցինք այդ կանոնավոր ձվածիրը՝ 5 մ խորությամբ, 28 և 36 մ առանցքներով: Երբ խառնարանում հայտնաբերվի երկնաքարի մնացորդ, հետք, կամ առնվազն՝ հարվածի որևէ հետևանք, ապա ֆիզիկա-քիմիական, երկրաբանական, հնաբուսաբանական, հողագիտական դյուրին եղանակներով հնարավոր կլինի որոշել բախման ժամանակը, թերևս՝ 2-3 դարի ճշտությամբ, որով և կթվագրվի Սևսարի ասուպի ժայռապատկերը:

**Աստղագիտական թվագրման պատմամշակութային նշանակությունը**

Առաջին եղանակով թվագրվել է Վարդենյաց լեռնանցքի մեկ ժայռապատկեր, ընդ որում՝ այնտեղ կա ևս 10-ը: Երկրորդ եղանակով կորոշվի մոտ 25 պատկերով խմբի բացարձակ տարիքը: Այսինքն, աստղագիտական երկու եղանակով կարող է հասակագրվել առնվազն 40 ժայռապատկեր: Ճշգրիտ թվագրված պատկերը ելակետային նշանակություն ունի, այն դառնում է ժամանակագրման հիմք՝ դեռևս չթվագրվածների հետազոտման համար:

**4. Օրացույցի և տոմարի պատմության պարզաբանումներ**

Հայաստանի ժայռապատկերներում, կոթողներում ու կառուցվածքներում պարունակվող կիրառական աստղագիտական գիտելիքի դրսևորում է տոմարը: Օրացույցի ակունքը վաղնջական շրջանում է, ինչի վկա են նաև պեղածո նյութն ու լեզվական տվյալները: Դրանց բովանդակային ժառանգականությունը վկայում է Լեռնաշխարհում մշակույթի անընդմեջ զարգացումը և իր բնատարածքում Հայոց նախնականությունը: Հնդեվրոպական բնօրրանի տեղայնացումը, տարբեր օրացույցների ծագման տեղի և ժամանակի պարզաբանումը լույս են սփռում այս հարցերում ևս[15]:

Հնագույն շրջանից պահպանված մշակութակիրների սղությունը, ժայռապատկերների, հարակից հուշարձանների և գտածոների մեկնաբանման խնդրում առկա բազմակարծությունը և թվագրման մոտավորությունը, լեզվական և արտալեզվական փոփոխությունները հաշվի առնելով հանդերձ, կարելի է պնդել, որ հայոց ստեղծագործության այս առանցքային ոլորտը ևս՝ օրացույցը, իր ժամանակին եղել է առաջնային և ազդեցություն գործել շրջակա երկրների և ժողովուրդների ժամանակաչափ համակարգերի ձևավորման վրա:

**5. Ժայռապատկերը և հնադարյան արվեստի ծագման խնդիրները**

Նախնադարի մտածողությունը, հնագույն գիտելիքն ու ժայռարվեստը միավորված են գիտության և արվեստի ընդհանուր դրույթներով և հասկացություններով: Մարդկային ճանաչողության երկու կարևոր ձևերի էությունը, ծագումը, կապը, գործառույթը և մեթոդը, տեսակները և հատկանիշները քննության առնելով, անտիկ և միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի նվաճումներին զուգահեռելով է հնարավոր ամբողջացնել խնդրո առարկան:

---

15 Տե՛ս **Բաղալյան Հ.**, Օրացույցի պատմություն, Եր., 1970, **Թումանյան Բ.**, Տոմարի պատմություն, Եր., 1972; **Թոխաթյան**, 2013, էջ 222-234:

Արվեստը կերպարի ու ձևի միջոցով իրականության արտացոլման, ճանաչման, կերպավորված իմաստավորման ու նաև՝ մարդու ինքնաճանաչման հզոր միջոց է: *Գիտութիւն միաւորէ զգիտացօղն և զգիտելին*[16], այսպես է բնորոշել Գրիգոր Տաթևացին ճանաչողության ընթացքը: Ժայռանկար կերտելիս մարդն իրեն նույնական ու համաձույլ զգալով ստեղծած կերպարի հետ, մտովի ներգրավվել է երևույթներում ու վիճակներում, դարձել թե՛ ծեսի իրականացնողը, և թե դրա մասն ու մասնակիցը: Ժայռանկարն այդ միասնության առհավատչյան է, քանզի պատկերը, դրա ստեղծման գործընթացը և նկարի մոտ իրականացվող արարողությունն անցյալում միասնական ծիսապաշտամունքային ոլորտում էին:

Պատկերագրության մշակույթը, և արվեստն առհասարակ՝ որպես մտքի և զգացողության փոխանակում նյութեղեն կրողի միջոցով, դարձան մարդկային հաղորդակցության մի նոր աստիճան, փուլ ու գործունեության ասպարեզ: Այն ներկայանում է իբրև բնության մեջ արարված մարդկային աշխարհ, ձեռակերտ, երկրորդ բնություն, բնության զարդարում մարդածին հորինվածքներով: Մշակութային տարածության արդի այս ձևակերպումներին համահունչ է Գրիգոր Տաթևացու մյուս հանճարեղ միտքը. մարդիկ *զնիւթ երկրաւոր գեղեցկացուցանեն զանազան նկարիւք և ճարտարութեամբ*[17]: Սա կարող է համարվել նաև ժայռարվեստին տրված պատկերավոր բնորոշում:

Հայաստանի ժայռապատկերներում պահպանվել են նախնադարյան գիտելիքի, հավատալիքների և արվեստի բարձրարժեք դրսևորումներ: Ժայռարվեստի ոլորտում առկա է և՛ արվեստի հայտանիշը՝ ավարտուն, ամփոփ, ինքնուրույն, ինքնաբավ լինելը, և՛ գիտության հայտանիշը՝ խմբայնությունը, շղթայնությունը, համակարգի օղակ լինելը: Արվեստին և գիտությանն իր առնչակցության առումով ժայռանկարը յուրովի համատեղում է դրանք:

Պատկերային արվեստի այս ինքնատիպ ոլորտի շրջանակներում դիտարկվում են մի շարք առանցքային խնդիրներ՝ հնագույն արվեստի ու գիտության ծագումը և առնչությունները, ժայռապատկերի՝ մարդկային ճանաչողության ու հաղորդակցության միջոց լինելը: Ուստի, ժայռապատկերը ներկայանում է և՛ որպես արվեստաբանության ու գեղագիտության առարկա, և թե գիտաճանաչողական միջոց, իբրև հնամենի պատկերագիր խոսք:

Պատկերակազմ քարեղեն «էջերը» դրսևորում են գրքային մշակույթին բնորոշ հատկանիշներ: Ժայռապատկերը ևս հեղինակային տեղեկատվական աղբյուր է, պահպանման ու փոխանցման միջոց, ընթերցելի է և ունի ընթերցող: Բովանդակությամբ այն բազմազան է և անսահմանափակ, գոյությունը տևական է, կուտակելի է և հանրությանը մատչելի, կրկնելի է, վերափոխելի ևն: Ժայռապատկերը ներկայանում է որպես «գիրք» երևույթի նախատիպ: Արդի ժայռապատկերագիտական միտքը կարևորում է դրա դերը՝ որպես մտահղացված և ուղղորդված տեղեկակիր՝ գրի հնագույն, պահպանված և ընթերցելի միջոց[18]:

Գիտաբանական վերոնշյալ խնդիրները դիտարկել ենք հին հունական և միջնադարյան հայ փիլիսոփայության նվաճումներին զուգահեռ:

---

16 Գիրք Հարցմանց Երիցս երանեալ Սրբոյն Հօրն մերոյ **Գրիգորի Տաթեւացւոյն**, Կ.Պոլիս, 1729, h. III, էջ 121:
17 Գիրք Քարոզութեան, արարեալ **Գրիգորի Տաթեւացւոյն**, Ձմերան հատոր, Կ.Պոլիս, 1740, էջ 156:
18 Տե՛ս **Anati E.** World Rock Art: the Primordial Language, Vol. 12, Valcamonica, 1994, էջ 9:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1.** Հայաստանի ժայռապատկերները մ.թ.ա. VII-I հազ. պատմամշակութային իրականության լուսաբանման միջոց են: Պատմագիտական այս ինքնատիպ սկզբնաղբյուրը գիտաճանաչողական բարձր արժեք ունի, որպես հնամենի մտածողության ու գործունեության պատկերային դրսևորում: Հնագույն աշխարհայացքի արտահայտություն ժայռանկարը մշակույթի կրող է, դրա մի փուլն ու ձևը: Ժայռապատկերման երևույթը բաղադրյալ է և բազմակողմ, քանզի նյութական ու հոգևոր մշակույթի մի շարք ոլորտներում նախնյաց իմացության և ապրումի՝ գիտելիքի, պատկերացումների, զգացողության և զգացմունքի դրսևորման, գրանցման, արտահայտման, փոխանցման և կուտակման կայուն ձև է: Մարդկային հաղորդակցության այս միջոցը պատկերագրի նախաձև է, և այդ կերպ տեղեկություն է պահպանել գործունեության բազմաթիվ ասպարեզներից: Ժայռապատկերն աղերսվում է մշակույթի այլ ճյուղերին, հատկապես զգալի է ազդեցությունը հետագա գրային համակարգերի, պատկերային ու կառուցողական արվեստի մյուս ոլորտների վրա:

**2.** Ժայռապատկերները պատմամշակութաբանական հավաստի սկզբնաղբյուր կարող են դառնալ ամբողջական, լիարժեք դասակարգման միջոցով, որն ընդգրում է դրանց կազմը և կառուցվածքը, տեղաբաշխումը և գոյության պայմանները, ժամանակը և զարգացման փուլերը, հետազոտման ձևերը, ուսումնասիրվածության աստիճանն ու գործառույթը: Դրան են նպաստում «ժայռապատկերաբանություն» գիտաճյուղի հիմունքների ձևակերպումը՝ խնդիրը, հայեցակարգը, հիմնադրույթները, մեթոդական կառույցը, հետազոտման փուլերը և հասկացութային հենքը՝ սահմանումները, բառեզրերը և չափորոշիչները:

**3.** Հայաստանում մշտապես գիտական պատշաճ վերաբերմունք է դրսևորվել ժայռապատկերների և առնչակից հուշարձանների հայտնաբերմանն ու հետազոտմանը: Այդ են վկայում մոտ 135 տարվա պատմագրության ընդարձակ շարադրանքը և 93 աղյուսակներում ներառված պատկերային նյութը: Վաղմիջնադարյան և հետագա հայ մտածողների անդրադարձները հավաստում են գիտության այս ճյուղի հնագույն ակունքների գոյությունը, և այս հիմքով Հայաստանում սկզբնավորվեց նորօրյա ժայռապատկերաբանությունը:

**4.** ժայռապատկերների և հարակից քարակերտ հորինվածքների տեսակների, տեղադրության, ժամանակաշրջանի, խմբայնության, բնապատմական միջավայրի, ուղեկցող նյութի, թեմայի, բովանդակության, ոճի, կատարման կերպի և վիճակի բազմակողմանի բնութագրումը և շուրջ 155 աղյուսակում ներառված պատկերանյութը հավաստում են դրանց պատմամշակութային բարձրարժեքությունը տարածաշրջանի համապատկերում: Հետազոտական դաշտի ընդլայնումը՝ ՀՀ և ԱՀ լեռներում մեր դիտարկած մոտ 3500 ժայռանկարի և տասնյակ կառուցվածքների, հնագիտական, ճարտարապետական, լեզվական ու մատենագրական, հնաստղագիտական ու տոմարական, բանահյուսական և ազգագրական նոր նյութի ընդգրկումը մի շարք առնչություններ է ի հայտ բերել ժայռարվեստի և մյուս ոլորտների միջև, լուսաբանելով մշակույթի այդ ճյուղերի ձևավորման նախադրյալները: Դրանց շարունակական լինելը, տարբեր փուլերում դրսևորված տեխնիկա-արվեստաբանական ընդհանրականությունը վկայում են տեղաձին մշակույթի ժառանգականությունը:

**5.** Ծիսապաշտամունքային նշանակությամբ հանդերձ՝ երկնային լուսատուների և բներև-

ույթների պատկերներն ունեցել են տեղեկատվական ու կիրառական գործառույթ՝ որպես ժամանակի և տարածության մեջ կողմնորոշման միջոց (օրացույց, տարածքի և երկնքի գծագիր ևն): Որպես մեհենագրեր՝ դրանք հարատևել են նաև միջնադարյան գաղափարագրերում: Ժայռանկարները համահունչ և հաճախ նույնիմաստ դրսևորումներ ունեն հայ բանահյուսության և մատենագրության մեջ իրերի և երևույթների հիշատակումների հետ:

**6.** Ժայռապատկերների հետ համադրումն առավել ամրապնդում է այն դրույթը, որ կացարանի, բնակատեղիի, դամբանադաշտի և այլ շինվածքների տեսքը, կազմը, տեղը և դիրքը ձևավորվել են նաև լուսարևային ընկալումների ազդեցությամբ: Մենաքարերի մի շարք խմբերում կարող են լինել Երկրի կողմերի, Արևի, Լուսնի և պայծառ լուսատուների կարևոր դիրքերի ցուցիչներ, որոնք ծառայել են որպես օրացույցի, գուցե և՝ խավարման պահի հաշվարկի միջոց: Այդ են վկայում նաև երկնադիտական համալիրներում բացահայտված հնաստղագիտական-տոմարական նոր փաստերը:

**7.** Ժայռապատկերներն իմաստաբանորեն աղերսվում են առարկայական մշակույթի հիմնական ոլորտներում տիեզերաբանական ընկալումների դրսևորումներին՝ քարագործության մեջ, խեցեղեն, մետաղ, փայտե և հյուսածո իրերի ձևերում ու նախշերում, փոխադրամիջոցի կառուցվածքում, կերպարվեստում ու կառուցողական արվեստում: Երկնալուսային պատկերացումներն արտացոլված են հավատալիքի և ծեսի, ռազմա-մարզական, երաժշտա-պարային, խաղա-թատերային ոլորտներում, և հատկապես՝ գրի, լեզվի ու խոսքի մեջ, բառապաշարում և անվանակերտման ասպարեզում (դիցանուն, անձնանուն, տեղանուն): Այս ամենը ներկայացված է 38 աղյուսակում:

**8.** Վարդենյաց լեռնանցքի 10 աստղաքարտեզներից մեկի տարիքը 4600 ± 200 տարի է, ըստ ժայռապատկերի թվագրման աստղագիտական մեր առաջին եղանակի: Մյուս եղանակով կարող է հասակագրվել Սևսարի երկնադիտարանը՝ պեղումներով, բնագիտական մեթոդներով և տեխնիկական միջոցներով հաստատման դեպքում:

**9.** Հայոց օրացույցը տեղածին է և զգալիորեն ազդել է շրջակա երկրների և ժողովուրդների ժամանակաչափ համակարգերի ձևավորման ու զարգընթացի վրա: Մշակույթի առանցքային այս ոլորտի՝ տոմարի ակունքներին առնչվող մի շարք խնդիրներ ևս պարզաբանվում են ըստ Ժայռապատկերների, հնաստղագիտական ու լեզվական նյութերի:

**10.** Ժայռապատկերը մշակութային տարածություն ձևավորող տարր է և դրա արգասիք: Մարդկային ճանաչողության և ինքնադրսևորման այս միջոցը գիտության և արվեստի յուրօրինակ համատեղում է՝ բովանդակության ու ձևի ներդաշնակություն, հնամենի պատկերագիր խոսք՝ գրքային մշակույթի բնորոշ կողմերով: Ժայռարվեստին առնչվող գիտաբանական խնդիրներում հին հունական ու միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի նվաճումների ներառմամբ ակնառու է դառնում ստեղծարար գործունեության ժառանգական և շարունակական լինելը Հայոց մշակույթում:

Ատենախոսության արդյունքները, որոշակի լույս սփռելով պատմական զարգացումների ընթացքին, պարզաբանում և ըմբռնելի են դարձնում Հայոց մտածողության և մշակույթի ծագումնաբանական ակունքներն ու առանձնահատկությունները:

**Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները**


1. **Թոխաթյան Կ.**, Որոշ ժայռապատկերների տարիքի որոշման փորձ.- ՀԱԻ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1995, էջ 26-27:
2. **Թոխաթյան Կ.**, Ժայռապատկերների ուսումնասիրման հիմունքները.- Հայաստանի պատմության պետական թանգարանի «Հայոց պատմության և մշակույթի հարցեր» գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 41-42:
3. **Թոխաթյան Կ.**, Մի ժայռապատկերի բացարձակ թվագրման նոր եղանակ.- «Հայկական մշակույթը հնագույն ժամանակներից մինչև Քրիստոնեության ընդունումը», ՀՀ ԳԱԱ ԱԻ և ՀԱԻ միացյալ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 2000, էջ 15-17:
4. **Վարդումեան Գ., Թոխաթեան Կ.**, Հայոց լուսարեւային պատկերացումները (ըստ ժայռապատկերների և ազգագրական նիւթերի).- Բազմավէպ, 2002, էջ 383-407:
5. **Թոխաթյան Կ.**, Ժայռապատկերաբանության ակունքները Հայաստանում.- Հայոց պատմության հարցեր, 4, Եր., 2003, էջ 3-10:
6. **Թոխաթեան Կ.**, Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ.- Բազմավէպ, 2003, 1-4, էջ 44-100:
7. **Tokhatyan K.S.** I reflessi dell'antica conoscenza astronomica nell'arte rupestre dell'Armenia.- Atti del XIII Convegno Internazionale "Archeoastronomia: un dibattito tra archeologi ed astronomi alla ricerca di un metodo comune" (Genova, 8-9 feb. 2002; Sanremo, 1-3 nov. 2002), Genova, "Istituto Internazionale di Studi Liguri", 2009, p. 83-87.
8. **Тохатян К.**, Наскальные изображения Великой Армении: астрономические рисунки и строения.- Сборник материалов Международного семинара-тренинга по историко-культурному наследию стран СНГ, Алматы, 2011, с. 169-179:
9. **Թոխաթյան Կ.**, Հայկյան օրացույցի ակունքներում.- «Հայկազուններ» ժողովածու, Եր., «Գիտություն», 2013, էջ 222-234:
10. **Թոխաթյան Կ.**, Ժայռապատկերաբանության և օրացույցի ակունքները Հայաստանում և Անանիա Շիրակացին.- Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում, Եր., 2014, «ՀՀ ԳԱԱ Գիտություն», էջ 107-133:
11. **Թոխաթյան Կ.**, Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների քարտեզագրումը.- «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Եր., 2015, էջ 329-339:
12. **Թոխաթյան Կ.**, Հայաստանի ժայռապատկերները նախնադարյան արվեստի համատեքստում.- Լրաբեր հասարակական գիտությունների, 2015, 2, էջ 368-381:
13. **Tokhatyan K.** Rock Carvings of Armenia.- Fundamental Armenology, 2015, 2, էջ 184-205 <www.fundamentalarmenology.am/datas/pdfs/180.pdf>.
14. **Թոխաթյան Կ.**, Երկնային լուսատուներն ու երևույթները ժայռապատկերներում.- «Մշակութային աստղագիտությունը Հայկական լեռնաշխարհում» երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2016, էջ 148-155:
15. **Թոխաթյան Կ.**, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը.- Պատմաբանասիրական հանդես, 2016, 2, էջ 180-198:

## ТОХАТЯН КАРЕН СЕДРАКОВИЧ

# ТИПОЛОГИЯ И ИСТОРИКО-КУЛЬТУРНОЕ ЗНАЧЕНИЕ НАСКАЛЬНЫХ ИЗОБРАЖЕНИЙ АРМЕНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 22-го декабря 2020 г., в $14^{00}$, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

## РЕЗЮМЕ

Исследование посвящено изучению наскальных изображений Армении.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы. В работу включено приложение, в котором есть карты, списки, предложения и 199 страниц иллюстраций петроглифов и сравнительного материала.

Во введении обоснованы новизна и актуальность темы, представлены цели и задачи, хронологические и географические рамки исследования и методология. Далее анализируются источники и литература, а также дается научно-практическое значение работы.

**В первой главе** – **Наскальные изображения Армении** – рассматриваются петроглифы как историко-культурный первоисточник, всеобъемлюще отражающие основные сферы деятельности предков, представляя собой целостную систему их жизненных реалий и мировоззрения. Сформулированы основы научной дисциплины «Петроглифология», ее задачи, концепция, методология, принципы классификации и понятийная основа.

В Армении открытие и исследование наскальных изображений началось в 1886 г. В 93 таблицах приложения иллюстрирована 135-летняя история их изучения. Около 12 тыс. изображений, найденных в 140 местах Нагорья, свидетельствуют о беспрерывном присутствии армянской культуры в своей колыбели, об этнокультурном единстве их создателей.

Наскальные изображения Армении в основном находятся в высокогорье (2000-3300 м), на склонах хребтов Гегама, Варденисса, Вайка, Сюника, Зангезура, Карвачара, Шатаха, Кордука и г. Арагац. Петроглифы иногда встречаются и на равнинных местах (400-2000 м), а также около поселений бронзового и железного веков.

В арменоведении принято считать, что эпоха петроглифов длилась с VII по I тыс. до н.э. Традиции резьбы по камню сохранились на античных и средневековых сооружениях.

Наскальные изображения тесно и гармонично связаны с окружающей природно-исторической средой, где и сформировали культурный ландшафт. В их разнообразии определены 31 тематические группы. По типам и состоянию они разложены на 10, а по стилю, исполнению и стадийности – на 17 групп. Все это иллюстрировано в 155 таблицах.

Наблюдаются тесные связи между наскальным искусством и другими сферами армянской культуры. Тематика, стиль и типы петроглифов сохранились в веках, неизменно и

почти идентично выражаясь в керамике, на бронзовых поясах, барельефах, статуэтках и печатях, на коврах и фресках, достигнув совершенства в миниатюрах.

Большое количество, тематическое богатство и высокая плотность распределения петроглифов указывает на то, что Армянское нагорье было очагом этой сферы культуры.

**Во второй главе – Археоастрономические памятники** – интерпретированы петроглифы астрономического содержания, в которых изображены небесные светила и явления. Рассмотрены проявления археоастрономической мысли в строениях и в прикладном искусстве, а также отражение древних космологичеких представлений в других сферах, соприкасающихся с наскальным творчеством – в мировоззрении, в верованиях и культах, в словесности и литературе дописьменного и последующих эпох.

**В третьей главе – Применение петроглифологического знания в историографических и искусствоведческих задачах** – анализированы упоминания Мовсеса Хоренаци и Анании Ширакаци, свидетельствующие о древнейших истоках резьбы по камню и астрономических записей.

Для абсолютной датировки наскальных изображений наиболее достоверны астрономические методы. В Армении есть два уникальных памятника, дающих такую возможность:

1. На верхней точке перевала Варденяц расположены крупные плиты с выгравированными кольцами, представляющими созвездия. С помощью астрономических рассчетов восстановлен вид созвездия в прошлом и определено время его создания (27-25 вв. до н.э.).

2. На г. Севсар Варденисского хребта находится выбитая на глыбе карта небосвода. Среди астрономических фигур есть изображение редкого явления – крупного метеора. У подножия г. Аждаак есть чашеобразная яма диаметром 30 м – вероятное место падения метеорита. Обнаружив следы удара в кратере, время падения можно будет определить методами естественных наук, тем самым указав на возраст небесной карты Севсара.

Освещены вопросы истории календаря и летосчисления. В петроглифах Армении встречаются все типы календарных основ – солнечный, лунный и смешанный. Лингвистический анализ календарных терминов и параллели наскальных календарей с археологическими образцами указывают на местное происхождение систем измерения времени.

Наскальные изображения сформировали своеобразное культурное пространство, одновременно становясь его продуктом. Изучение этой сферы изобразительного мышления проясняет ряд ключевых вопросов: происхождение древнего искусства, ее атрибуты и функции, роль науки и искусства как средств познания и коммуникации. Освещение этих общенаучных аспектов проведено на основе достижений античной греческой и средневековой армянской философии.

Таким образом, наскальные изображения, будучи проявлением знаний прошлого, гармоничным сочетанием науки и искусства, представлены как предмет истории искусства и эстетики, как древнейший иконографический язык, старинное “живописное слово” с признаками книжной культуры.

**В Заключении** изложены основные итоги и выводы исследования.

**TOKHATYAN KAREN SEDRAK**

# TYPOLOGY AND HISTORICAL-CULTURAL SIGNIFICANCE OF ROCK CARVINGS OF ARMENIA

Dissertation for the degree of Candidate of Sciences on the specialization of "Historiography and Source Study" 07.00.05.

The defense of the dissertation will be held on 22 December 2020, $14^{00}$ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA operating at the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

## SUMMARY

The present dissertation is devoted to the study of petroglyphs of Armenia.

The dissertation consists of an Introduction, three Chapters, a Conclusion, and a list of used sources and literature. The Appendix includes maps, lists, suggestions, and 199 pages of illustrations of petroglyphs and comparative material.

The Introduction substantiates the novelty and relevance of the topic, presents the goals and objectives, the chronological and geographical frames of the research and its methodology. Further, the sources and literature are analyzed, as well as the scientific and practical significance of the work is provided.

**In the first chapter** – **Rock carvings of Armenia** – petroglyphs are examined as historical and cultural sources, reflecting the main spheres of our ancestors' activity and representing an integral system of displaying their life realities and worldview. The foundations of the scientific discipline "Petroglyphology" are formulated, its tasks, concept, methodology, classification principles and terms.

In Armenia, the discovery and research of rock carvings began in 1886. In the Appendix, 93 tables illustrate the 135-year history of their study. About 12 thousand images, found in 140 locations of the Armenian Highlands, testify to the continual presence of Armenian culture within its cradle, affirm the ethnocultural unity of their creators.

The rock carvings of Armenia are mainly located high in the mountains (2000-3300 m elevation), on the slopes of the Geghama, Vardenis, Vayq, Syuniq, Zangezur, Qarvachar, Shatakh, Korduq mountain ranges and Mt. Aragatz. Petroglyphs are sometimes found in foothills and plains (400-2000 m), as well as near Bronze and Iron Age settlements.

In Armenology it is accepted that the era of petroglyphs lasted from the $7^{th}$ to the $1^{st}$ millennia BC. The traditions of stone carving have been preserved in ancient and medieval structures.

Rock carvings are closely and harmoniously connected to the surrounding natural and historical environment, in which the cultural landscape was formed. In their variety, 31 thematic groups are defined. By their type and state of preservation, they are classified into 10, and by the style, implementation and stages are divided into 17 groups. This is illustrated in 155 tables of Appendix.

Close ties are observed between rock art and other spheres of Armenian culture. The theme, style and types of petroglyphs have been preserved through centuries. They were invariably and almost identically expressed in ceramics, on bronze belts, bas-reliefs, statuettes, seals, carpets and frescoes, and reached their epitome in miniatures.

The large number of petroglyphs, their thematic diversity and high density of distribution indicate that Armenian Highlands was one of the main centers of this cultural phenomenon.

**In the second chapter** – **Archaeoastronomical monuments** – petroglyphs with astronomical significance are interpreted, in which luminaries and heavenly phenomena are depicted. The manifestations of astronomical mindset in buildings and applied art of antiquity are revealed. The reflection of ancient cosmological perceptions in other spheres related to rock art is examined – in the worldview, in beliefs and cults, in lexicon and literature of the pre-literate and later eras.

**In the third chapter** – **Rock art knowledge applied to historiography and art studies** – the mentions of Movses Khorenatsi and Anania Shirakatsi are interpreted, evidencing about the ancient sources of carving on rocks and astronomical records.

Astronomical methods are the most reliable for absolute dating of petroglyphs. There are two unique monuments in Armenia that provide such an opportunity.

1. At the top of the Vardenyats Pass there are large slabs with engraved rings representing constellations. By means of astronomical calculations, the view of the constellation in the past was reconstructed and the time of their creation was determined (27-25 Ce. BC).

2. Thete is a huge carved sky map on the Mt. Sevsar of Vardenis range. Among some astronomic figures, it contains an image of a rare phenomenon – big meteor. At the foot of the Mt. Azhdahak, a small crater of 30 m in diameter was found – the probable place of a meteorite fall. When the impact traces are found in the crater, the time of collision may be determined by natural science methods. Thus, the image in Sevsar will be dated.

The issues of history of the calendar and of chronology are highlighted. All types of calendar bases – solar, lunar and mixed, are found in the petroglyphs of Armenia. The linguistic analysis of calendar terms and parallels of rock calendars with archaeological specimens indicates the local origin of time measurement systems.

The rock paintings have formed a unique cultural space, simultaneously becoming its product. The study of this sphere of pictorial thinking clarifies a number of key issues: the origin of ancient art, its attributes and functions, the role of science and art as a means of cognition and communication. The elucidation of these general scientific aspects is carried out on the basis of ancient Greek and medieval Armenian philosophy.

Thus, rock carvings, being a manifestation of knowledge of the past, a harmonious combination of science and art, are presented as an object of art history and aesthetics, an ancient iconographic language, an archaic “pictorial narrative” with certain attributes of book culture.

The main results of the dissertation are summarized in the Conclusion.